

**ՀՐԱՎԵՐ**  
**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**  
**"Ծառայություն մատուցող**

**Բազմազանեցման և պարենային ապահովության ծրագրի իրականացման համար" GEF/TA/QCBS-2018/002**

Հայաստանի Հանրապետություն

Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամ /ԳԷՀ/, Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում ծրագրի Դրամաշնորհ

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Որակի և Գնի վրա հիմնված ընտրություն*

ԳԷՀ Դրամաշնորհ No 2000001401

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել ԳԷՀ /այսուհետ՝ ԳԷՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

**Ծրագրի նպատակն է՝**

Պատուհան 1 /Պ1/. Բազմազանեցման և պարենային անվտանգության ծրագրի շրջանակում (ԲՊԱԾ) Ծառայություն մատուցողը (ԾՄ) առանցքային դերակատարություն կունենա «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» Բաղադրիչ 3-ի իրականացման գործում: Նրա հիմնական խնդիրն է ապահովել, որ Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում գտնվող ընտրված 16 թիրախային համայնքներ իրազեկվեն Պ1-ի նպատակների, գործընթացների և խնդիրների մասին: Հետամուտ լինել, որ շուրջ 1,100 ուղղակի շահառուներ (առնվազն 320 տնտեսություն) ընտրվեն Ծրագրի սկզբունքների և մոտեցումների հիման վրա, որոնք արդյունավետ կերպով կմոբիլիզացվեն և հնարավորություն կստանան՝ պլանավորել և իրականացնել բիզնես գործունեություն: ԾՄ-ն աջակցություն կցուցաբերի այս ընտրված անհատ շահառուներին և խմբերին՝ Մեկնարկային փաթեթների տրամադրման, կարողությունների զարգացման և ուսուցման միջոցով: ԾՄ-ն հաշվետու կլինի ԾԻԳ-ին ծրագրային աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև ծրագրի շրջանակներում տրամադրված ներդրումների արդյունավետ իրականացումը և պահպանումն ապահովելու, առաջընթացի և արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու նպատակով:

**ԾՄ-ի հիմնական պարտականությունները և խնդիրները կլինեն.**

1. Ձևավորել և առաջադրանքի տևողության ընթացքում ունենալ որակավորված անձնակազմից բաղկացած թիմ Պ1-ի իրականացման նպատակով՝ վերջինիս ապահովելով սարքավորումներով, նյութերով, հարմարություններով և առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ այլ միջոցներով:

2. ԾՄ-ն պետք է հիմնական փաստաթղթերը մշակի և ԾԻԳ-ին ներկայացնի պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այդ թվում՝

- Նախնական հաշվետվություն, որը կներառի ծրագրի իրականացման մեխանիզմները և միջոցառումները, գործողությունների պլանը, թիրախավորման և ընտրության ռազմավարությունը, տարեկան բյուջեն և այլն,
- Ծրագրի վերաբերյալ իրազեկման պլան,
- Պ2-ի շրջանակում մշակված, ընտրված մեկնարկային փաթեթների վերաբերյալ ուսուցման ծրագիր,
- Մոնիթորինգի և մենթորինգի ծրագիր:

3. Այս ծրագրային փաստաթղթերը պետք է մշակված լինեն ԾԻԶ-ում և ԾԻԳ-ի կողմից տրամադրված այլ Ծրագրային փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, պահանջների և եղանակների հիման վրա: Փաստաթղթերը պետք է թարմացվեն ամեն տարի և ներկայացվեն ԾԻԳ-ի հաստատմանը:

4. Իրականացնել ԾԻԳ-ի և ԳԶՄՀ-ի կողմից հաստատված փաստաթղթերով նախատեսված աշխատանքները, ներառյալ՝ *Տեղեկատվական արշավ, Շահառուների ընտրություն, Մեկնարկային փաթեթների վերաբերյալ կարողությունների զարգացում, Մեկնարկային փաթեթներ, Շուկայի հետ կապեր:*

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված **հասարակական կազմակերպություններին /ՀԿ/** հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր: **ՀԿ-ն** պետք է իրավաբանորեն գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության /ՀԶԳ/ սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը; ՀԶԳ-ի բոլոր անդամները պետք է լինեն ՀԿ-ներ:
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),

***Կարճ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝***

- Վերջին հինգ տարիների ընթացքում - Կազմակերպությունը պետք է ունենա դրամաշնորհային ծրագրերի պատշաճ կառավարման, մոնիթորինգի և գնահատման, ֆինանսական կառավարման և գնումների կազմակերպման համակարգեր: (*առավելագույնը 50 միավոր*)
- Վերջին հինգ տարիների ընթացքում - փորձառություն Հայաստանում փոքրածավալ համայնքային գյուղատնտեսական և գյուղական ձեռներեցության, արժեշղթայի զարգացման ծրագրերի իրականացման աջակցության բնագավառում, (*առավելագույնը 25 միավոր*)
- Վերջին հինգ տարիների ընթացքում - կարողություն մշակելու դասընթացներ, որոնք հատուկ հարմարեցված կլինեն թիրախային խմբի կարիքներին՝ ժամկետների, բովանդակության, տևողության, վայրի, օգտակարության և մատուցման ռազմավարության տեսանկյունից: (*առավելագույնը 25 միավոր*)

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 14 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. <https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2018թ. փետրվարի 16-ը, ժ. 17.00:

***ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի***

***իրականացման գրասենյակ” ՊՀ***

***Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան***

***Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ; Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)***